ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ

ԹԵՍՏ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Բարձրությունը հնչյունի հատկություններից մեկն է և կախված է

1) տատանումների հաճախականությունից
2) տատանումների տևողությունից
3) տատանումների ուժգնությունից
4) տատանումների թափից

2 Հնչյունը ֆիզիկական երևույթ է, որն ունի հետևյալ հատկությունները.

1) բարձրություն, ուժգնություն, հնչողություն և նրբբերանգ
2) բարձրություն, հզորություն, տևողություն և օբերտոն
3) բարձրություն, ուժգնություն, տևողություն և տեմբր
4) բարձրություն, ուժգնություն, տևողություն և արագություն

3 Մեծ սեքստան կազմված է

1) 6 աստիճանից և 4.5 տոնից
2) 7 աստիճանից և 6 տոնից
3) 7 աստիճանից և 5.5 տոնից
4) 6 աստիճանից և 5 տոնից

4 Մծց.5-ն այն ինտերվալն է, որը

1) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 3 տոնից
2) հանդիպում է բնական մինորում և բաղկացած է 3.5 հնչյունից
3) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 4 տոնից
4) հանդիպում է բնական մաժորում և բաղկացած է 3 աստիճանից

5 Փոքրացրած ինտերվալները այն ինտերվալներն են, որոնք

1) փոքր են մեծ ինտերվալներից կես տոնով
2) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից մեկ տոնով
3) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից կես տոնով
4) փոքր են մաքուր ինտերվալներից մեկ տոնով

6 Մեծացրած սեքստակորդի կառուցվածքն է.

1) մծց.4 + փ.3
2) մք.4 + մ.3
3) փքց.4 + մ.3
4) մ.3 + մծց.3

7 Կվարտսեքստակորդը եռահնչյան

1) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
2) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
3) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
4) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը

8 D_2 - ը կառուցվում է

1) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3
2) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 +փ.3 + փ.3
3) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3
4) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 +փ.3 + փ.3

9 VII_7- ը մինորում ունի հետևյալ կառուցվածքը.

1) փ.3 + մ.3 + փ.3
2) փ.3 + փ.3 + մ.3
3) մ.3 + փ.3 + փ.3
4) փ.3 + փ.3 + փ.3

10 II_5^6-ը հարմոնիկ մաժորում

1) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2
2) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.3 + մ.2
3) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 +մ.3
4) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2

11 Լադի բոլոր հնչյունների հաջորդաբար հնչողությունը կոչվում է

1) գամմա
2) արպեջիո
3) տոնայնություն
4) հնչյունաշար

12 Համանուն տոնայնություններն ունեն

1) տարբեր հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
2) միևնույն հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
3) տարբեր հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
4) միևնույն հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ

13 Մելոդիկ մաժորին բնորոշ է

1) 7^{+} աստիճանը
2) 6^{-}, 7^{-} աստիճանները վարընթաց կարգով շարժվելիս
3) 6^{-}, 7^{-} աստիճանները վերընթաց կարգով շարժվելիս
4) 6^{+} աստիճանը

14 Ո՞ր շարքում են միայն Միջնադարյան լադեր

1) Միքսոլիդիական, Լոկրիական, Էոլական
2) Էոլական, Պենտատոնիկա, Լիդիական
3) Միքսոլիդիական, Կրկնակի մեծացրած, Փռյուգիական
4) Իոնական, Կրկնակի հարմոնիկ, Դորիական

15 Մելոդիկ մինորին բնորոշ է

1) 6^{-}, 7^{-} աստիճանները վերընթաց և վարընթաց կարգով շարժվելիս
2) 6^{+}, 7^{+} աստիճանները վերընթաց կարգով շարժվելիս
3) 6^{-}, 7^{-} աստիճանները վարընթաց կարգով շարժվելիս
4) 6^{+}, 7^{+} աստիճանները վերընթաց և վարընթաց կարգով շարժվելիս

16 Միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների կազմակերպված հաջորդականությունը կոչվում է

1) չափ
2) տակտ
3) ռիթմ
4) մետր

17 Տևողությունների բաժանման առանձնահատուկ ձևերն են.

1) սեքստոլը, կվինտոլը, տրելը
2) սինկոպան, տրիոլը, կվարտոլը
3) դուոլը, տրեմոլոն, սեպտոլը
4) սեպտոլը, սեքստոլը, տրիոլը

18 Բարդ և խառը չափերը տարբերվում են միմյանցից հետևյալ առանձնահատկություններով.

1) բարդ չափերը բաղկացած են տարբեր պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են միևնույն տակտերից
2) բարդ չափերը բաղկացած են միևնույն պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են տարբեր պարզ տակտերից
3) բարդ չափերը բաղկացած են միևնույն տակտերից, խառը չափերը բաղկացած են տարբեր տակտերից
4) բարդ չափերը բաղկացած են միևնույն պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են միևնույն կամ տարբեր պարզ տակտերից

19 Բարդ տակտերում կա այնքան խումբ, որքան

1) պարզ չափերի քանակն է
2) նոտաների քանակն է
3) տակտերի քանակն է
4) հնչյունների քանակն է

20 նշանը հնգագծի չորրորդ գծի վրա կոչվում է

1) բասո-պրոֆունդային բանալի և ցույց է տալիս փոքր օկտավայի սոլ նոտայի տեղը
2) բասի բանալի և ցույց է տալիս փոքր օկտավայի ֆա նոտայի տեղը
3) բասո-պրոֆունդային բանալի և ցույց է տալիս մեծ օկտավայի ֆա նոտայի տեղը
4) բասի բանալի և ցույց է տալիս փոքր օկտավայի սոլ նոտայի տեղը

21 Նշվածներից ո՞րն է համարվում մելիզմ.

1) տրեմոլո
2) տրիո
3) տրել
4) տրիոլ

22 Հետևյալ տերմինները՝ **Prestissimo**, **Agitato**, **Amoroso**, **Doloroso, Brilliante** նշանակում են (ըստ հերթականության)

1) հանգիստ, ծայրահեղ արագ, հուզված, շարժուն, թախիծով
2) հարմարավետ, գրգռված, հանգիստ, թախծալի, տխուր
3) թախծալի, արագ, զգացմունքով, կրակոտ, կրքոտ
4) ծայրահեղ արագ, հուզված, սիրով, թախծալի, փայլուն

23 Հարմոնիայում եռահնչյունները կարող են դասավորվել

1) խիտ և լայն
2) խիտ և խառը
3) լայն և խառը
4) խիտ, լայն և խառը

24 Պոլիֆոնիկ շարադրանքում նմանակումը կոչվում է

1) իմիտացիա
2) ֆուգա
3) կանոն
4) կոնտրապունկտ

25 Վարիացիոն ձևն ունի հետևյալ տարատեսակները.

1) հնագույն, խիստ և խառը
2) հնագույն, խառը և ազատ
3) հնագույն և ազատ
4) հնագույն, խիստ և ազատ

26 Ռոնդոն այն ձևն է, որն ունի հետևյալ տառային սխեման.

1) ABCAB
2) ABACAB[1]A
3) ABCBA
4) ABACA

27 Հայ ժողովրդական երաժշտության ճյուղերն են.

1) գեղջկական երգ, գուսանա-աշուղական արվեստ, քաղաքային երգ
2) գեղջկական երգ, քաղաքային երգ, հոգևոր երգ
3) տաղային արվեստ, գուսանա-աշուղական արվեստ, քաղաքային երգ
4) հոգևոր երգ, գեղջկական երգ, գուսանա-աշուղական արվեստ

28 Հայ ժողովրդական երաժշտությունը

1) հոմոֆոն է
2) մոնոդիկ է
3) հարմոնիկ է
4) պոլիֆոնիկ է

29 Հայկական նոտագրության ստեղծողն է.

1) Գաբրիել Երանյանը
2) Նիկողայոս Թաշչյանը
3) Համբարձում Լիմոնջյանը
4) Կոմիտասը

30 Հայ ժողովրդական երաժշտության ձայնակարգերը ձևավորվում են

1) օկտավաների շղթայման միջոցով
2) տրիխորդների հաջորդման սկզբունքով
3) տետրախորդների շղթայման սկզբունքով
4) տետրախորդների հաջորդման սկզբունքով

31 Հորովելները

1) պանդխտության երգեր են
2) տղամարդու աշխատանքային երգեր են
3) պարերգեր են
4) կանանց աշխատանքային երգեր են

32 Ո՞ր շարքում են միայն հայ գեղջկական երգի ժանրեր

1) աշխատանքային, ծիսական, դրամատիկական
2) Անտունիներ, օրորներ, քայլերգեր
3) հայրենասիրական, ռոմանս, օրորներ
4) աշխատանքային, ծիսական, պանդխտության

33 Սանթուրը ժողովրդական նվագարան է,

1) որը պատկանում է լարային- հարվածային խմբին, և ունի դիատոնիկ լարվածք
2) որը պատկանում է լարային- կսմիթային խմբին, և ունի խրոմատիկ լարվածք
3) որը պատկանում է լարային- կսմիթային խմբին, և ունի դիատոնիկ լարվածք
4) որը պատկանում է լարային- հարվածային խմբին, և ունի խրոմատիկ լարվածք

34 Ո՞վ է հայկական քանոնի դպրոցի հիմնադիրը.

1) Ծովինար Հովհաննիսյան
2) Ալվարդ Միրզոյան
3) Խաչատուր Ավետիսյան
4) Անժելա Աթաբեկյան

35 Նշվածներից ո՞վ է հայտնի հայ թառահար.

1) Մարտին Խաչատրյան
2) Իլյա Մինասյան
3) Ջիվան Գասպարյան
4) Հովհաննես Դարբինյան

36 Նշվածներից ո՞վ է հայտնի հայ ուդահար.

1) Մարտին Խաչատրյան
2) Միհրան Դեմիրճյան
3) Վաչե Հովսեփյան
4) Հովհաննես Դարբինյան

37 Ո՞վ է «Ծամերով պարի» հեղինակը

1) Գրիգոր Հախինյան
2) Արզաս Ոսկանյան
3) Խաչատուր Ավետիսյան
4) Ծովակ Համբարձումյան

38 Նշվածներից ո՞րն է Սայաթ- Նովայի երգը.

1) Լեպհո լե-լե
2) Նա մի նազ ունի
3) Նազանի
4) Ախ, Մարալ ջան

39 Ո՞ր գործիքներն են կազմում Սազանդարների խումբը.

1) քամանչա, թառ, դհոլ
2) դհոլ, զուռնա, դուդուկ
3) քամանչա, դուդուկ, դափ
4) քամանչա, թառ, դափ

40 Ո՞վ է Արևելյան ժողգործիքների սիմֆոնիկ նվագախմբի հիմնադիրը.

1) Սաշա Օգանեզաշվիլի
2) Ալեքսանդր Սպենդիարյան
3) Արամ Մերանգուլյան
4) Վարդան Բունի

41 Ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել «Կաքավի երգը».

1) Կոմիտաս
2) Տիգրան Չուխաջյան
3) Բարսեղ Կանաչյան
4) Ռոմանոս Մելիքյան

42 Ո՞վ է հայկական առաջին գործիքային կոնցերտի հեղինակը.

1) Ալեքսանդր Հարությունյան
2) Արամ Խաչատրյան
3) Առնո Բաբաջանյան
4) Գրիգոր Եղիազարյան

43 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել Գոսերով սիմֆոնիան.

1) Ղազարոս Սարյան
2) Տիգրան Մանսուրյան
3) Էդվարդ Միրզոյան
4) Անուշավան Տեր-Ղևոնդյան

44 Կոմպոզիտորական ի՞նչ տեխնիկա է կիրառել Առնո Բաբաջանյանը դաշնամուրային «Վեց պատկեր» ցիկլում.

1) մոդալ
2) դոդեկաֆոն
3) պոլիֆոնիկ
4) պուանտիլիստական

45 Ո՞վ է հայկական առաջին քառաձայն պատարագի հեղինակը.

1) Կոմիտաս
2) Քրիստոփոր Կարա-Մուրզա
3) Արմեն Տիգրանյան
4) Մակար Եկմալյան

46 Գրիգոր Նարեկացին առավել հայտնի է իր

1) երգերով
2) սաղմոսներով
3) տաղերով
4) շարականներով

47 Ավետ Տերտերյանի ո՞ր սիմֆոնիայի կազմի մեջ են ներառվել ազգային փողային գործիքներ.

1) թիվ 7
2) թիվ 1
3) թիվ 8
4) թիվ 3

48 Ո՞ր բալետում է Էդգար Հովհաննիսյանն օգտագործել ժողովրդական մեղեդիներ.

1) «Անտունի»
2) «Հավերժական կուռք»
3) «Երկնագույն նոկտյուրն»
4) «Ժաննա դ՛Արկ»

49 Ո՞ր կոմպոզիտորի արվեստում է ձևավորվել ծրագրային «սիմֆոնիկ պոեմի» ժանրը

1) Ֆրանց Շուբերտ
2) Ֆելիքս Մենդելսոն
3) Ֆերենց Լիստ
4) Յոհաննես Բրամս

50 Նշվածներից ո՞ր օպերան է գրված ըստ Ալեքսանդր Պուշկինի ստեղծագործության.

1) «Եվգենի Օնեգին»
2) «Կատերինա Իզմայլովա»
3) «Խովանշչինա»
4) «Իվան Սուսանին»

51 Երգեհոնը

1) ստեղնաշարային-փողային գործիք է
2) ստեղնաշարային գործիք է
3) ստեղնաշարային-կսմիթային գործիք է
4) ստեղնաշարային լարային գործիք է

52 Ո՞ր կոմպոզիտորն է «Հունգարական պարերի» հեղինակը.

1) Ֆերենց Լիստ
2) Յոհաննես Բրամս
3) Ռոբերտ Շուման
4) Ֆելիքս Մենդելսոն

53 Ո՞ր կոմպոզիտորը չի պատկանում ռոմանտիզմի շրջանին.

1) Ֆերենց Լիստ
2) Ֆրանց Շուբերտ
3) Քրիստոֆ Վիլիբալդ Գլյուկ
4) Յոհաննես Բրամս

54 Ո՞վ է «Տրավիատա», «Ռիգոլետտո», «Դոն Կառլոս» օպերաների հեղինակը.

1) Վինչենցո Բելլինի
2) Ջակոմո Պուչինի
3) Ջուզեպպե Վերդի
4) Ջոակինո Ռոսսինի

55 Դմիտրի Շոստակովիչի թիվ 7-րդ սիմֆոնիան գրվել է. . .

1) 1917թ. հեղափոխության օրերին
2) 2-րդ աշխարհամարտի օրերին
3) 1937թ. ստալինյան բռնությունների օրերին
4) 1-ին աշխարհամարտի օրերին

56 Նշվածներից ո՞րը Ղ. Սարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պաննոյի մաս չի կազմում.

1) «Հին Երևան»
2) «Մայրամուտ»
3) «Արևային պեյզաժ»
4) «Գառնի»

57 Ո՞վ է «Սայաթ-Նովա» օպերայի հեղինակը.

1) Արամ Խաչատրյան
2) Տիգրան Մանսուրյան
3) Էդգար Հովհաննիսյան
4) Ալեքսանդր Հարությունյան

58 Նշվածներից ո՞ր վոկալ շարի հեղինակն է Ռոմանոս Մելիքյանը.

1) «Խոհեր»
2) «Երազ օրեր»
3) «Հայրենիքի ջրեր»
4) «Զմրուխտի»

59 Լյուդվիգ վան Բեթհովենի ո՞ր սիմֆոնիայում է հնչում երգչախումբ.

1) թիվ 3
2) թիվ 7
3) թիվ 9
4) թիվ 6

60 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորը չի գրել սիմֆոնիա.

1) Ռոբերտ Շուման
2) Ֆրեդերիկ Շոպեն
3) Ֆրանց Շուբերտ
4) Յոհաննես Բրամս